

**Փոփոխությունների և թարմացումների ամփոփագիր Ձեր
Blue Shield of California Promise Health Plan-ում:
Medi-Cal Ապահովագրված Նպաստներ և Ծառայություններ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՆ՝ Հունվարի 1, 2019թ.**

Հարգելի Blue Shield Promise անդամ,

Այս նամակի նպատակն է Ձեզ տեղեկացնել Ձեր «Medi-Cal»-ի կողմից ծածկված Blue Shield Promise Health Plan-ի փոփոխությունների մասին: Ստորև ներկայացված թարմացումները նկարագրում են վերջերս Blue Shield Promise-ի կողմից կատարված փոփոխությունները, որոնք կարող են ազդել Ձեր՝ ինչպես ստանալու ձևի վրա, ինչպես նաև որտեղ կարող եք զանգահարել օգնության համար: Այս փոփոխությունները պայմանավորված են՝

- Թարմացումներ Ձեր 2018թ.-ի Blue Shield Promise Medi-Cal-ի Անդամների ձեռնարկում/փոխհատուցման ապացույցներում; կամ,
- Նոր նպաստներ և ծառայություններ, որոնք հասանելի են Ձեզ որպես Blue Shield Promise-ի Medi-Cal անդամ:

Ձեր 2018թ.-ի Blue Shield Promise Medi-Cal-ի անդամի ձեռնարկի փոփոխության վերաբերյալ փոփոխությունները նշվում են՝

- ~~Ձեզված տեքստ~~ ցույց տալու, որ այս տեքստը ջնջվել է ԿԱՄ
- **Հաստ և շեղագիր տեքստ**, ցույց տալու, որ այս տեքստը ավելացվել է

Խնդրում ենք կարդալ այս փոփոխությունները եւ պահել այս նամակը Ձեր 2018թ.-ի Blue Shield Promise Medi-Cal-ի Անդամների ձեռնարկի/փոխհատուցման ապացույցների հետ: Եթե հարցերը ունեք Ձեր ծածկված ծառայությունների և նպաստների վերաբերյալ, խնդրում ենք զանգահարել Blue Shield Promise Member Services՝ **1.800.605.2556 (TTY 711)**, երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:00-18:00: Այս զանգն անվճար է:

Բաժին. Նպաստներ և ծառայություններ

Բուժօգնության կազմակերպման ծրագիր

Blue Shield Promise-ը բուժօգնության կազմակերպման թիմ ունի, որն օգնում է պատասխանել ցանկացած հարցի, որը կարող էք ունենալ՝

- **Ձեր առողջապահության վերաբերյալ**
- **Հոգեկան առողջության պահպանման (հոգեկան առողջություն և պսիխոակտիվ միջոցների օգտագործման հետևանքով առաջացած խանգարումներ) ծառայությունների հետ կապված հարցեր**
- **Այլ ծառայություններ, որոնք կարող են նպաստել Ձեր առողջության բարելավմանը**

Եթե Care Management ծրագրի մասին հարցեր ունեք, խնդրում ենք զանգահարել խնամքի մենեջերին անվճար հեռախոսահամարով 1.877.702.5566 (TTY 711), երկուշաբթիից ուրբաթ օրերին՝ ժամը 8:00-17:00 (բացառությամբ որոշ տոն օրերի):

Բաժին. Նպաստներ և ծառայություններ

Շաքարախտի կանխարգելման ծրագիր (նոր նպաստ)

2019 թվականի հունվարի 1-ից Blue Shield Promise-ն առաջարկում է Շաքարախտի կանխարգելման ծրագիրը (DPP): Սա ապացույցների վրա հիմնված ապրելակերպի փոփոխման ծրագիր է, որը նախատեսված է նախադիարետով ախտորոշված անձանց շրջանում շաքարախտի 2-րդ տեսակի կանխարգելման կամ դանդաղեցման համար: Ծրագիրը տևում է մեկ տարի եւ կարող է շարունակվել եւ լրացուցիչ տարի այն անդամների համար, ովքեր որակավորում ունեն: Ծրագիրը կիրառում է հաստատված ապրելակերպի փոփոխություններ, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալով՝

- **Տրամադրում է մարզիչ,**
- **Ուսուցանում է ինքնուրույն մոնիտորինգ և խնդրի լուծում,**
- **Տրամադրում է խրախուսանք և կարծիք**
- **Տրամադրում տեղեկատվական նյութեր նպատակներին աջակցելու համար, և**

- **Հետևում են քաշի ավելացմանը, որպեսզի նպաստեն նպատակների իրականացմանը:**

DPP-ով հետաքրքրվող անդամները պետք է բավարարեն ծրագրի համապատասխանության պահանջները: Լրացուցիչ տեղեկությունների համար գանգահարեք Blue Shield Promise-ի Անդամի ծառայությունների կենտրոն՝ 1.800.605.2556 (TTY 711) երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:00-18:00:

Բաժին. Նպաստներ և Ծառայություններ

Առողջարանային տների ծրագիր (նոր նպաստ)

Blue Shield Promise-ը փոխհատուցում է Առողջարանային տների ծրագրի (HHP) ծառայություններն, այն անդամների համար, ովքեր որոշ քրոնիկական առողջական խնդիրներ ունեն: Այս ծառայությունների նպատակն է օգնել համակարգել ֆիզիկական առողջապահական ծառայությունները, վարքային առողջապահական ծառայությունները և ստանալ համայնքային երկարաժամկետ ծառայությունները և աջակցություն (LTSS) քրոնիկական պայմաններով գտնվող անդամների համար:

Դուք կարող եք դիմել, եթե որակավորվում եք ծրագրի համար: Նաև կարող եք գանգահարել Blue Shield Promise կամ խոսել Ձեր բժշկի կամ կլինիկայի աշխատակիցների հետ՝ պարզելու, թե արդյոք կարող եք ստանալ HHP ծառայություններ:

Դուք կարող եք համապատասխանել HHP-ի համար, եթե՝

- **Դուք ունեք որոշակի քրոնիկ հիվանդություններ, ապա կարող եք գանգահարել Blue Shield Promise-ին՝ պարզելու այն հիվանդությունները, որոնք համապատասխանում են, և**

- **Համապատասխանում եք հետևյալ կետերից որևէ մեկին՝**

- **Դուք ունեք երեք կամ ավելի HHP-ի համար իրավասու քրոնիկական պայմաններ**
- **Դուք մնացել եք հիվանդանոցում անցյալ տարվա ընթացքում**
- **Նախորդ տարվա ընթացքում երեք կամ ավելի անգամ գտնվել եք արտակարգ իրավիճակների բաժնում կամ**

○ **Ապրելու տեղ չունեք**

Դուք չունեք որակավորում, որպեսզի ստանաք HHP ծառայություններ, եթե՝

- Դուք ստանում եք հոսպիտալին ծառայություններ կամ
- Դուք գտնվել եք հմուտ բուժքույրական հաստատությունում, ավելի երկար, քան ընդունելության ամսվա և հաջորդ ամսվա ընթացքում:

Ծածկված HHP ծառայություններ՝

HHP- ն Ձեզ կտրամադրի խնամքի համակարգող և խնամքի թիմ, որը կաշխատի Ձեր և Ձեր բուժաշխատողների, ինչպես նաև Ձեր բժիշկների, մասնագետների, դեղագործների, գործի ղեկավարների և այլ անձանց հետ Ձեր խնամքը համակարգելու համար: Blue Shield Promise-ն սպասհովույն է HHP ծառայություններ, որոնք ներառում են՝

- * Խնամքի համապարփակ կառավարում
- * Խնամքի համակարգում
- * Առողջության խթանում
- * Համապարփակ անցումային խնամք
- * Անհատական և ընտանեկան աջակցության ծառայություններ
- * Ուղղորդում դեպի համայնքային և սոցիալական աջակցություն

Անդամի արժեքը՝

Անդամի համար HHP-ի ծառայությունների համար արժեք չկա:

Blue Shield Promise-ը և նրա գործընկերները կարող են զանգահարել Ձեզ, եթե դուք համապատասխանում եք կանոններին: Լրացուցիչ տեղեկությունների համար Blue Shield Promise-ի Անդամի ծառայությունների կենտրոն՝ **1.800.605.2556 (TTY 711)** երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:00-18:00:

Բաժին. Նպաստներ և Ծառայություններ

Մանկական պալիատիվ խնամք (նոր նպաստ)

2019 թվականի հունվարի 1-ից Blue Shield Promise-ի կողմից տրամադրվելու են մանկական պալիատիվ խնամքի ծառայություններ (PPC):

*Պալիատիվ խնամքը լուրջ բժշկական խնդիրներ ունեցող երեխաներին առաջարկում է աջակցություն և ծառայություններ, որոնք կարող են բարելավել երեխայի կյանքի որակը: PPC-ն նաև ընտանիքներին հատուկ օգնություն է տրամադրում երեխայի բարդ հիվանդությունների խնամքի համար և կարող է բուժում տրամադրել, որը կբուժի հիվանդությունը: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Blue Shield Promise-ի Անդամի ծառայությունների կենտրոն՝ **1.800.605.2556 (TTY 711)** երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:00-18:00:*

Բաժին. Նպաստներ և Ծառայություններ

Տնային դեղատան ծրագիր

Որակավորում ունեցող անդամների համար Blue Shield Promise-ն առաջարկում է Տնային դեղատան ծրագիր, որն օգնում է անդամներին կառավարել իրենց հսկվող դեղերի անվտանգությունը: Տնային դեղատունն աշխատում է Blue Shield Promise-ի հետ, որտեղ Դուք կստանաք հսկվող դեղերի համար բոլոր դեղատոմսերը:

Blue Shield Promise-ը կզանգահարի Ձեզ, եթե Դուք որակավորվեք ծրագրի համար: Եթե դուք այս ծրագրում ընդգրկված եք, սպա կկարողանաք ընտրել Ձեզ հարմար տնային դեղատուն: Blue Shield Promise-ը նաև կտեղեկացնի Ձեր բժշկին երբ Դուք զրանցվեք: